Ռափայել Պատկանյան

Սրտի վկայություն

Նվեր բարեկամական տ. Վառվառեին

Հայաստանը չէ՛ միտք վերացական
Եվ ոչ գեղեցիկ ցնորք է հայրենիք,
Հայրենյաց սերը չէ՛ պղատոնական
Ոչ շաղփաղփանք է, և ոչ սընոտիք:

Չէ՛, չէ՛, երգած չէ՛ դեռ Մայր Հայաստան
Կարապի երգը՝ երգն յուր տըխրագին .
Այն որ լըսեցիք՝ այն երգն էր գարնան,
Ավետյաց երգ էր հայոց սոխակին:

Չէ՛, չէ՛, հայ ազգը չէ՛ ազգ հընացած,
Անպիտան զավակ այս ներկա դարին .
Նա դեռ յուր վերջին խոսքը չէ հայտնած
Հանճարն չէ ցուցած օտար ազգերին:

Չէ՛, չէ՛, հայ ազգը չէ ազգ անիծած,
Ինչպես կրկնում են կարճամիտ մարդիկ .
Այս՝ հույնեն սովրած ու բերան առած
Աշխարհակործան, տընաքանդ կարծիք:

Չէ՛, չէ՛, հայերը չեն անմիաբան,

Երբ որ խընդիր կա ընդհանուր ազգի,
Եվ երբ պետք լինի՝ հայրենյաց պաշտպան՝
Բյուրք ոտքի կելնեն ինչպես մի հոգի:

Հայ ազգի սըրտում, թեև թագստյան,
Կա գանձ հազվագյուտ և հույժ մեծագին,
Փըրկության հավատ, հույս արդարության,
Սեր ազատության վասըն յուր ազգին:

Չէ՛, չէ՛, դահիճ չեն լուսավոր ազգեր,
Վըստահենք, նոքա չեն մորթիլ հային,
Չի հուսահատվինք, իմ եղբայր հայեր,
Մեզ էլ իրավունք կուտան մարդկային . . .

Բայց եթե չի տա՞ն . . . ո՛հ, այն ժամանակ . . .
Հինգ միլիոն հայեր կազմ ենք ու պատրաստ,
Նախնյաց անելով մեզի օրինակ:
Կամ կռվել-հաղթել, կամ ընկնել տապաստ: